ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՆԵՐՏԵՔՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«...Կառուցվածքի հարցում հայ պատմիչը անկաշկանդ է: **Պատմագրական երկը պարտադիր կառուցվածք չի պահանջում»,**– *գրում է Մայիս Ավդալբեգյանը* (ընդգծումը բնագրում – Ա.Ն.)[1]: *Այդուհանդերձ, ցանկացած պատմագրական երկ ունի որոշակի կառուցվածք, ավելին՝ կառուցվածքային որոշ տարրեր նույնիսկ ընդհանրական են:*

Պատմագրական երկի կառուցվածքը մեծապես պայմանավորված է բովանդակությամբ և թելադրվում է վկայագրվող իրադարձությունների բնույթով: Հատկապես շարադրանքի ներքին տարածքում առկա կառուցվածքային միավորները պատճառաբանվում են պատմությունը համակողմանի, ընդգրկուն, հավաստի, միևնույն ժամանակ՝ առանց ավելորդաբանությունների ներկայացնելու մտահոգությամբ ու ցանկությամբ: Այլ հարց է՝ պատմիչն, ի վերջո, հասե՞լ է դրան, թե՞ ոչ:

«Գիրք պատմութեանցի» առաջին իսկ պարբերության մեջ Առաքել Դավրիժեցին ուրվագծում է իր երկի կառուցվածքային յուրահատկություններն ու բովանդակային սահմանները, թեպետ հանգամանքների բերումով ծրագրածը, հատկապես կառուցվածքի առումով, լիովին ու լիարժեք իրագործել հնարավոր չի եղել:

Պատմագիրքն իբրև կառուցվածքային միավոր, ըստ էության, ավարտվում է «Յաղագս սքանչելեացն Աստուծոյ, որ եղև ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուան իւրոյ ուրացաւ» վերնագրված ԽԹ գլխով: Հաջորդ՝ «Յաղագս մասնական հրկիզութեան, որ եղև ի Կոստանդնուպոլիս մեծ քաղաքին» Ծ գլխով սկսվում է «Գիրք պատմութեանց»-ի այն մասը, որը Դավրիժեցին ոչ թե գրել է կամ շարադրել որոշակի փաստերի հիմամբ, այլ՝ ուղղակի, անկանոն և

առանց որևէ հատուկ սկզբունքի արտագրել-ներբերել է տարբեր անձանց կողմից պատմված ու գրավոր իրեն տրամադրված տարաբնույթ ու տարաբովանդակ պատմություններ: Սա հանրահայտ իրողություն է և պարբերաբար արձանագրվել-մատնանշվել է Դավրիժեցու պատմագրքին առնչված գիտնականների ու հայագետների կողմից[2], թեպետ արժանացել է տարբեր մեկնաբանությունների: Լեոյի կարծիքով, օրինակ, այդ գլուխները «մուծված են Դավրիժեցու Պատմագրության մեջ օտար մարդկանց ձեռքով»[3]: Իսկ ահա Մաղաքիա Օրմանյանն այդ կապակցությամբ գրում է. «...շարադրեալ պատմութիւնը մինչեւ Լ գլուխին վերջն է, իսկ անկէ ետքը մինչեւ ԾԶ գլուխ եղող մասերը, որք իրարմէ անկախ նիւթեր են, կ'երեւի թէ **առեն առեն գրած պատրաստ ունէր, և ետքէն պատմութեան ծայրը կցեց**» (ընդգծումը մերն է – Ա.Ն.)[4]:

Դավրիժեցու պատմագիրքը բացվում է աղոթքով, որով պատմիչը դիմում է Աստծուն՝ իր սկսած գործը բարեհաջող ավարտին հասցնելու համար. «Աւգնեա մեզ Աստուած Փրկիչ մեր. վասն մեծի փառաց անուան քո: Մի՛ մեզ տէր, մի՛ մեզ. այլ անուան քում տուր զփառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո: Հոգիդ քո սուրբ եկեսցէ առ մեզ եւ լուսաւորեալ զմիտս մեր կատարեսցէ զսկսեալս ի մէնջ, ի փառս եւ ի գովեստ սրբոյ երրորդութեանդ ամէն»:

Իբրև կառուցվածքային միավոր այս աղոթքը բացառիկ երևույթ է հայ պատմագրության պոետիկայում՝ գոնե իբրև սկիզբ տեղադրությամբ ու բացող գործառույթով:

Աղոթքին հաջորդում է պատմագրքի առաջաբանը, որն ունի «Նախադրութիւն առաջիկայ գրոցս պատմութեան» վերնագիրը: Այստեղ Դավրիժեցին համառոտ, բայց հստակ ներկայացնում է «Գիրք պատմութեանց»-ի **մասին**-ն ու **ինչպես**-ը, այսինքն՝ բովանդակությունն ու կառուցվածքը. «Պատմութիւն անցից Հարուածոց, որք եկին ի վերայ աշխարհիս Հայոց ի յետին ժամանակիս ի թագաւորէն Շահաբաս կոչեցելոյ և ի նորին ազգէն որք են Պարսիկք: Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի և նորին կաթուղիկոսացն: Այլ և վասն աղաւաղելոյ կարգաց և կրօնից քրիստոնէութեան: Ընդ սոցին և այլ ևս բանք պատմութեան դիպուածոց քաղաքաց և գաւառաց, որք պատահեցան ի թագաւորաց և յիշխանաց և ի կաթուղիկոսաց և յայլոց, զտցես աստ բաժանեալ ի գլուխ գլուխս ըստ բերման ժամանակին» (էջ 55)[5]:

Ինչպես գրում է Աշոտ Սարգսյանը՝ «Հայ միջնադարյան պատմագրական հուշարձանների մեծագույն մասը օժտված է նման մուտքով, մի բան, որից կարելի է ենթադրել, թե դա դիտվել է որպես անհրաժեշտ, հիմնական շարադրանքը նախապատրաստող, բայց նաև նրանից որոշակիորեն առանձնացող միավոր»[6]: *Մեր կողմից հավելենք, որ այդ մուտքային կամ առաջաբանային հղացքում Առաքել Դավրիժեցին ամենակարճառոտներից ու նպատակասլացներից մեկն է հայ պատմագրության մեջ:*

Իր աշխատության կառուցվածքում, ինչպես տեսանք, Դավրիժեցին ամենից առաջ կարևորել է գլուխների բաժանումն ու ժամանակագրական կարգը: Սակայն «Նախադրութիւն...»-ում ներկայացված կառուցվածքային շեշտադրումները վերաբերում են ընդհանուր հյուսվածքին: Հետագա շարադրանքում «Գիրք պատմութեանց»-ի տարբեր հատվածներում Դավրիժեցին հընթացս այլ տեքստային-ծրագրային նշումներ էլ է անում, որոնք, սակայն, ցուցանում են բովանդակության մասնավոր կողմեր: Կայունորեն դրսևորվելով ու որոշ օրինաչափություններ արձանագրելով՝ այդ նշումները վերածվում են ներտեքստային կառուցվածքային միավորների: Սա նույնպես բնորոշ է հայ պատմագրությանն ընդհանրապես:

Այդ կերպ՝ կայունորեն դրսևորվում են պատմության բովանդակությունը հընթացս ցուցանող ծրագրային նշումները, որոնք տեղում են այնքան, քանի դեռ պատմիչը հնարավորություն ունի խոստում տալու: Այսինքն՝ դրանք կախված են տեքստային տարածությունից: Այդ կարգի նշումները մենք խմբավորել ենք իբրև ***ծրագիր-խոստում*** *միավոր: Դրանց հաճախադեպությունը պատմության շարադրանքը նաև յուրատեսակ զրույցի է վերածում ընթերցողի հետ:*

Ծրագիր-խոստումի *կառուցվածքային նպատակը կենտրոնացված պատում ստեղծելն է, երբ տարաբնույթ շեղումները հնարավորինս բացառվում են: Որպեսզի չշեղվի բուն նյութից, պատմիչը ներկայացվող իրադարձություններին առնչվող, բայց տվյալ համաբնագրում ոչ այնքան կարևոր որոշ դեպքեր ու իրադարձություններ հիշատակում է համառոտ՝ հարկավոր տեղում դրանց մասին ևս պատմելու* ***խոստումով****: Նշենք, որ դա բացի ընթերցողին խոստում լինելուց, նաև հենց իր՝ պատմագրի համար զուտ* ***ծրագ-***

ըային նշում է, որպեսզի այդ դեպքը հետագայում չմոռանա վկայագրել:

Ծրագիր-խոստումը հայ պատմագրության մեջ գերիշխում է հատկապես Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում և բխում է նրա երկի չընդհատվող երկխոսական ընույթից: Նրա մեկենասը՝ Սահակ Բագրատունին, իր ցանկություններում երբեմն առաջ էր ընկնում, և Պատմահայրը չխախտելու համար իր աշխատության հյուսվածքը՝ նրան խոստանում էր իր ուզածը ներկայացնել համապատասխան տեղում: «Ցիւրում տեղւոջ պատմեսցուք», «ասել կայ մեզ առաջի»՝ այս կարգի ընդմիջարկումները Խորենացու պատմագրքում ամենահաճախ հանդիպող ներտեքստային կառուցվածքային միավորներից են[7]:

Ծրագիր-խոստումի իրականացումը Դավրիժեցին կատարում է երկու ձևով: Նախ՝ լինում են դեպքեր, որ խոստումն իրականացվում է գլուխներ անց: Այդ կերպ՝ «Ցաղագս գալստեան Շահաբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց և ունելոյ զամենայն, և վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր» երկարաշունչ վերնագրով Գ գլխում տված խոստումը՝ «Զայս Ջալալոց անուանքն յիշեալ եմք յառաջիկայդ ի մէջ ճառին, որ վասն սովին գրեալ եմք. և զորպիսութիւն Ջալալոցս գիտասցես զայն ճառն ընթեռնելով» (էջ 75), Դավրիժեցին մանրամասն իրականացնում է «Ցաղագս յայտնելոյ Ջալալոցն և սաստիկ սովուն և մարդակեր գայլոցն, և այլ ևս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի» վերնագրված է գլխում: ԺԸ գլխում մի առիթով հիշատակելով Նիկողայոս անունով վարդապետին, ով տվյալ գլխի վկայագրություններում կարևոր դերակատարություն չունի, Դավրիժեցին նշագրում է. «...զորոյ զորպիսութիւն ծանիցես ի նոցին պատմութենէ, զոր զկնի առնելոց եմք» (էջ 201), և այդ ծրագիր-խոստումն իրականացնելով՝ կենդանագրում է լվովցիների հոգևոր առաջնորդ Նիկոլի չարահնար ու վտանգավոր վարքը՝ «Պատմութիւն նեղութեանց և վշտոց զոր կրեցին Հայ ազգաւ քրիստոնեայք, որք ընակեալք են ի քաղաքն Իլով» վերնագրով ԻԸ գլխում:

Մեկ այլ տեղ՝ «Պատմութիւն վարդապետութեան եւ վարուց սրբոյ վարդապետին Պողոսի» վերնագրով ԻԳ գլխում Դավրիժեցին միաժամանակ և՛ ամրագրում է ծրագիր-խոստումը, և՛ երկու-երեք նախադասությամբ պարագրկված ներկայացնում է խոստումի

ընդհանուր բովանդակությունը՝ «Այլ և գոյ միւս այլ պատմութիւն որպէս և գրելոց եմք յառաջիկայդ՝ **ի ճառս պատմութեան նահատակութեան տէր Անդրէաս քահանային,** թէ մատնեցին զՊողոս վարդապետն և զՄովսէս վարդապետն Շահաբաս թագաւորին. զորս կալեալ էառ երեք հարիւր թուման տուգանք և ապա եթող» *(էջ 236-237): Ընդ որում՝ խոստումն իրականացվում է հենց այն վերնագրով գլխում, որը կանխավ նշագրել էր պատմիչը, և որը մենք ընդգծել ենք:*

Հասնելով ծրագիր-խոստումի իրականացմանը, Դավրիժեցին հաճախ հարկ է համարում հիշեցնել, որ այդ մասին կանխավ էր խոստացել գրել: Ինչպես՝ «Այժմ ասասցուք զպատճառ հակառակութեան կաթուղիկոսացն» *(էջ 183),* «Այլ արդ՝ օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ ըստ խոստման մերում, արդեն այժմիկ սկսցուք զկարգ կաթուղիկոսացն ի սրբոյ Ներսիսէ Կլայեցւոյ կարգաւ, և հասուցուք մինչև ի ժամանակս մեր» *(էջ 341): Հաճախ էլ՝ փաստում է ծրագիր-խոստումի իրականացումը: Ինչպես՝* «Արդ՝ զրաւ Գօրգի թագաւորին այսպէս եղև ներգործութեամբ շահին» *(էջ 117):*

Կան խոստումներ, որոնք պատմիչն իրականացնում է անմիջապես կամ գրեթե անմիջապես: Այդպիսի դեպքերում կրկին առկա են տեքստային կրկնվող միավորներ: **«Զկնիս, զոր արդ պատմեմք»,** *«ժամ է այսուհետ պատմել»,* **«այժմ ասասցուք»** *և այլ տեքստային կաղապարներ ցուցանում են, որ խոստումն անմիջապես է իրականացվելու.* «Իսկ զկնիս, զոր արդ պատմեմք...» *(էջ 179),* «...ժամ է այսուհետև պատմել մեզ վասն մեծի և անուանւոյ գիւղաքաղաքին Զուղայու» *(էջ 89) և այլն:*

Ծրագիր-խոստում միավորը շատ հաճախ դրսևորվում է որպես ***համառոտ ներկայացվող, ապա բուն-հարկավոր մասում բացվող տարածվող տեքստ*** *միավոր: Սա տարբերվում է նրանով, որ այս դեպքում հստակությունն ու կոնկրետությունը բացակայում են, խոստումի գործոնը չի գործում պարտադիր: Ինչպես՝* «Զսա ճեռնադրեաց այնու յուսով, որպէս զի լիցի ինքեան օգնական, իսկ նա եղև խոչընդակն և հակառակ նմա, **որպէս և զկնի պատմութիւնք ցուցանեն»** *(էջ 57),* «...որոյ քաջութիւնն յառաջիկայդ **ի բազում տեղիս լինի յիշեալ»** *(էջ 120),* «...և տակաւին ևս **պատմելոց եմք փոքր ի շատէ»** *(էջ 189) և այլն:*

Դավրիժեցու պատմագրքում գրեթե համատարած է կառուց-

վածքային այն հնարքը, երբ պատմիչը պատկերվող իրադարձությունների հոսքը, պատճառահետևանքային կապերն առավել հստակ ներկայացնելու մտահոգությամբ ու ցանկությամբ, ինչպես նաև շարադրանքը չծանրաբեռնելու նպատակով համառոտ ներկայացնում է արդեն վկայագրված որևէ պատմություն կամ դրվագ, երբեմն էլ մեկ-երկու նախադասությամբ, համառոտելով հիշեցնում է նախընթաց շարադրանքում ներկայացվածը. «Վասն զի որպէս սակաւ ինչ նշանակեցաք զաւերակս տաճարացն երկոցունց կուսանացն՝ ի ճառին Հռիփսիմէի, յորում վայրի պատմեցաք, թէ Ցռանկ պատրիք եկին և զնորին նշխարն գտին» (էջ 266), «Այս այն Թահմազղուլին է, որ Էջմիածնի քարինս հրամանաւ շահին հանեալ առաքեաց ի Սպահան...» (էջ 202) և այլն: Այդ կառուցվածքային միավորները խմբավորել ենք իբրև **նախընթաց տեքստի համառոտում կամ հիշեցում** միավոր: Այս միավորն էլ ունի իր տեքստային որոշ կաղապարները: Ներտեքստային կառուցվածքային այս միավորի նպատակն է կապակցել պատմության տարբեր դրվագները ու ստեղծել միասնականությամբ հատկանշվող պատում: Ինչպես հետևյալ օրինակում է. «Արդ՝ որպէս կանխաւ պատմեցաք վասն Դաւիթ կաթուղիկոսին, թէ գնաց ի դուռն շահին և արար ամբաստանութիւն վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, և շահն բարկացաւ ի վերայ Մելքիսէթի, ընկէց ի կաթուղիկոսութենէ և առաքեաց ի Սպահան: Իսկ Դաւիթ կաթուղիկոսն մնաց անդէն ի բանակին, ի դուռն շահին: Անդ էր և Ամիրգունայ խանն, որ էր տէր և իշխան ամենայն գաւառին Արարատու և սուրբ Էջմիածնի» (էջ 192): Հավելենք միայն, որ ընդգծվածը **նախընթաց տեքստի համառոտում կամ հիշեցում** ներտեքստային միավորն է, իսկ շարունակությամբ ապահովվում է իրադարձությունների հաջորդական վկայագրումը: Ահա այդպիսի նուրբ հնարքների է տիրապետում Դավրիժեցին:

Մյուս ներտեքստային միավորը, որ առանձնացրել ենք, կարելի է ձևակերպել այսպես. **սեփական տեքստի կրկնաբանություն-հիշեցում կամ նախընթաց շարադրանքի պարագրկում:** Սա շատ առումներով նման է նախորդ միավորին, բայց հիմնական տարբերությունն այն է, որ Դավրիժեցին այս դեպքում շատ անգամ սահմանափակվում է նշելով, որ այդ մասին արդեն խոսել է և երկար ներբերումներ չի անում: Այս միավորները շատ ժամանակ որևէ ընդարձակ հատվածի համառոտումն են լինում՝ որևէ կաղապարա-

յին միավորով (հիմնականում «որպէս որ ասացի», «որպէս պատմեցաք») պարագրկված, ինչպես՝ «Թէպէտ եղեն երկու կաթուղիկոսք, **որպէս որ ասացի**» *(էջ 58)*, «առման բերդին Գանջայու **որպէս յառաջագոյն նշանակեցաք**» *(էջ 119)*, «որպէս ի վեր անդր պատմեցաք» *(էջ 120)*, «որով օրինակաւ պատմեցաք» *(էջ 138)*, «...զոր ինչ յանցեալ ճառիդ պատմեցաք» *(էջ 144)*, «...թէ կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն» *(էջ 147)*, «ըստ օրինակին որպէս և նախ պատմեցաք» *(էջ 164)*, «որպէս և յառաջագոյն զամենայն որպիսութիւն պատմեցաք» *(էջ 183)*, «վասն որոյ և յիշեցաք ի ճառի Սրապիոնին» *(էջ 210)*, «և վարդապետն Պողոս՝ որ ի վերայ պատմեցաք» *(էջ 287)* և այլն:

Քանի որ Դավրիժեցու պատմագրքի աղբյուրները մեծ մասամբ բանավոր ծագում ունեն, և պատմիչը մեծ տեղ է տվել ականատեսների ու ականջալուր մարդկանց հաղորդած տեղեկություններին, ապա «Գիրք պատմութեանցում» իբրև կառուցվածքային կայուն միավորներ են դրսևորվում նաև ***ներբերվող այլտեքստերը, երբ պատմիչն առանց պատմողի անունը տալու ներբերում է տվյալ իրադարձությանը առնչվող պատմություն:*** *Այս միավորները ծառայում են նաև իբրև պատմության հավաստիությունը ցուցանելուն միտված ճարտասանական հնարանքներ՝ իրենց կաղապարային տարբերով:* ***«Ասեն»*** *և* ***«պատմէն»*** *բառային միավորները, որոնք նաև զրույցի ժանրային ցուցիչներից են, հայտնվում են տարբեր, այսպես ասած՝ միջավայրերում, և այդ կերպ պատմիչը ցուցանում է, որ պատմություն է ներբերում, թեպետ, անշուշտ, ներբերվածները միշտ չէ որ զրույցներ են: Ինչպես՝* «որպէս և պատմեն տեսողքն» *(էջ 59)*, «Ասի ևս յոմանց թէ...» *(էջ 102)*, «Այլ և ոմանք ասացին թէ» *(էջ 113)*, «որ բազումք ի մերոց ազգացս վկայեցին» *(էջ 131)*, «և այսմ խօսիցս ասողքն, ինքեանք իւրեանց աչօքն տեսեալ էին, և էին արք հաւատարիմք» *(էջ 131)*, «և նա պատմեաց մեզ զպատմութիւնս զայս: Եւ զկնի ասաց՝ թէ...» *(էջ 179)*, «Այլ և լուաք յոմանց թէ զայն ևս ասացեալ են...» *(էջ 182)*, «Այլ և արք ոմանք ասացին...» *(էջ 186)*, «զոր բազումք ասէին թէ...» *(էջ 194)* և այլն:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ, որպես կանոն, Դավրիժեցին այսպիսի դեպքերում կոնկրետ անուններ չի նշում: Եվ, ընդհանրապես, այս կարգի միավորներ օգտագործելիս հայ պատմիչները, եթե գործ չունեն գրավոր հանրահայտ աղբյուրների հետ, ա-

նունները գրեթե չեն նշում և կարելի է կարծել, որ նրանք, այնուամենայնիվ, հոգու խորքում կասկածել են ներբերվող վկայագրության հավաստիությանը, կամ, որ ավելի հավանական է, այդ այլ տեքստերը հորինել են իրենք՝ ստեղծելով հավաստիության պատրանք:

Այնուամենայնիվ, կան բացառիկ օրինակներ: Դավրիժեցին, օրինակ, հիշում է Մարտիրոս անունով եպիսկոպոսին. «Իսկ զկնիս, զոր արդ պատմեմք, Մարտիրոս անուամբ ոմն եպիսկոպոս պատմեաց՝ զոր ինքն էր աչօք տեսեալ: Ասէր՝ թէ...» *(էջ 179): Մեկ այլ անգամ՝ Վարդան անունով եպիսկոպոսին.* «Եւ ասէր վերոյիշեալ Վարդան եպիսկոպոսն, թէ...» *(էջ 171):*

Կարևոր կառուցվածքային նշանակություն ունեն այն միավորները, որոնցով Դավրիժեցին ամփոփում է իր պատմագրքի որևէ հատված կամ ամբողջացնում ասելիքը: Դրանք մենք խմբավորել ենք իբրև ***ավարտաբանություն*** *կամ* ***ասածի կոնկրետացում-եզրահանգում*** *միավոր, թեպետ շատ հաճախ դրանք դրսևորվում են նաև որպես եզրակացություններ: Այս կարգի միավորներն ունեն իրենց այսպես ասած՝ «մատնող» բառային ցուցիչները՝* ***արդ*** *և* ***ամեն:*** *Դրանցից երկրորդն աստվածաբանական տեքստերի, աղոթքների ավարտաբանական միավոր է և Դավրիժեցու պատմագրքում էլ հիմնականում կիրառվում է հրաշքների, տեսիլների, վարքերի ու վկայաբանությունների պարագային: Ուշարժանն այն է, որ* ***արդ***-*ը կիրառվում է իբրև ավարտաբանություն ազդարարող նախադասության սկզբնադիր, սկսող միավոր, իսկ* ***ամեն***-*ը վերջնադիր, վերջնաբառ միավոր: Ինչպես՝* «**Արդ** թէ այսպէս և թէ այնպէս՝ եղեն երկու կաթուղիկոսք միոյ աթոռի ի միում ժամանակի» *(էջ 58, սա ավելի շատ եզրակացություն է ներբերումների հիմամբ),* «Արդ՝ այսպէս եղև զրաւ կենաց Լաւասաւի թագաւորին» *(էջ 144),* «...ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն» *(էջ 146),* «Արդ՝ այս Աղամիր անուն այրս...» *(էջ 179),* «Արդ՝ օրհնեալ է Աստուած յամենայն ժամ» *(էջ 181),* «Արդ՝ Աջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, այսպիսի պատճառաւ և կերպիւ գնաց ի Սպահան» *(էջ 190),* «Արդ՝ եթէ այնպէս և թէ այսպէս...» *(էջ 197),* «Արդ զրաւ կենաց Սահակ կաթուղիկոսին և Պողոս վարդապետին այսպէս եղև, որոց ողորմեալ Տէրն Քրիստոս ներումն արասցէ նոցա՝ անքաւ մարդասիրութեամբն իւրով. ամէն» *(էջ 214) և այլն:*

Ավարտաբանության բառ ցուցիչները միշտ չէ, որ պարտադիր են: Այն կարող է լինել զուտ բովանդակային-ասելիքային, ինչպես՝ «Զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալ» (էջ 109), «Եւ այս և այսպէս» (էջ 180), «Արդ՝ այսոքիկ այսպէս» (էջ 350) և այլն:

Երկխոսություններն էլ ունեն իրենց յուրօրինակ ավարտաբանությունները, որոնցով եզրափակվում է խոսակցությունը: Ուշարժան է, որ Դավրիժեցու պատմագրքում, եթե զրուցում են հայն ու պարսիկը, ապա եզրափակողն անպայման երկրորդն է: Երկխոսություններում դրսևորվող ավարտաբանությունները չունեն արդ կամ ամեն բառային ցուցիչները, փոխարենը պատմիչն ինքն է «Եւ ի զրաւ բանին ասաց» նույնպես կայուն միավորով ցուցանում, որ դիալոգն ավարտվում է: Երկխոսություններում ավարտաբանությունները կառուցվում են նախընթաց երկխոսությունների բովանդակության հիման վրա: Այդպիսին է, օրինակ, Շահ-Աբասի և Մելքիսեթ կաթողիկոսի կարճ երկխոսությունը՝ վկայագրված «Թէ որպէս կամ յինչ պատճառէ տարան ի Սպահան քաղաք զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ զքարինք սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով ԺԷ գլխում: Ճիշտ է. Շահ-Աբասի խոսքը չունի առանձնահատուկ կաղապարային միավորներ, բայց դրանով ավարտվում է պատմության տվյալ դրվագը և հնչում վերջնագրի պես. «Դատաստանն քո աստ ոչ լինի առնել, զի վնասն քո մեծ է, այժմ պարտ է քեզ գնալ ի Սպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ՝ արարից զդատաստանն քո» (էջ 188):

Գրական և պատմագիտական առումով կարևոր է այնպիսի միավորի գոյությունն ու կիրառությունը, ինչպիսին պատմության բուն ընթացքը վերականգնող հնարք, դարձ միավորն է: Դա վկայությունն է այն բանի, որ Դավրիժեցին չափազանց հստակ է պատկերացրել իր աշխատության կառուցվածքը և նույնիսկ փորձել է դիմել կառուցվածքային խաղարկումների, ինչը, ցավոք, ամբողջապես այդպես էլ նրան չի հաջողվել: Զգտելով ներկայացնել իրադարձությունների ամբողջական համապատկեր, Դավրիժեցին, Աբրահամ Զամինյանի դիտողությամբ՝ «երբեմն ալ միջանկյալ ծանոթություններ կավելցնե, որ պատմության թելը կը խզեն»[8], թեպետ դրանք այսպես թե այնպես առնչվում են նկարագրվող դեպ-

քերին և լրացուցիչ փաստարկումներ են երևանում: Մանավանդ որ՝ ավարտելով ճյուղավորումները՝ Դավրիժեցին վերադառնում է բուն պատմությանը՝ չմոռանալով այդ մասին հիշեցնել նաև իր ընթերցողին: Այդ կերպ՝ պատմիչն ապահովում է իր աշխատության համակարգվածությունն ու ճիշտ ժամանակագրությունը: Ինչպես՝ «Դարձեալ դարձցուք ի սկիզբն պատմութեանս մերոյ» *(էջ 82)*, «Դարձեալ՝ դարձցուք ի յոճ նախկին պատմութեան մերոյ, ի բանն, զոր հասուցաք զՋղալօղլին ի Նախչուան, և զշահն տարաք ի Թարվէզ» *(էջ 88)*, «Եւ արդ յետ այսց ամենից զոր պատմեցաք...» *(էջ 89)*, «Վասն զի որպէս պատմեցաք ի նախկին ճառին՝ թէ կարգեաց շահն ի զօրացն Պարսից...» *(էջ 89)*, «...զՀանիս Թահմազղուլի բէկն, որոյ վասն յառաջագոյն պատմեցաք, թէ...» *(էջ 89)*, «Ի վեր անդր ի կարգի պատմութեան, զոր գրեցաք վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, թէ հնաց նա յաշխարհն Իլախաց: Արդէ յորժամ եհաս նա անդր...» *(էջ 293) և այլն:*

Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից՝ այս դեպքում ևս առկա են որոշակի տեքստային կաղապարներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Մայիս Ավդալբեգյան,** Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Երևան, 1984, էջ 17:
2. Տե՛ս, օրինակ, **Հակոբ Անասյան,** Հայկական մատենագիտություն, ԵԺԸ դդ, հատոր Ա, Երևան, 1959, էջ 1145-1146, **Գարեգին Զարբհանալյան,** Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 176, **Առաքել Առաքելյան,** Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր 2, Երևան, 1964, էջ 452, 552-553 և այլն:
3. **Լեո,** Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1946, էջ 364:
4. **Մաղաքիա Օրմանեան,** Ազգապատում, հատոր Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2492:
5. **Առաքել Դաւրիժեցի,** Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990: Այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, բոլոր ընդգծումներն իմն են – Ա.Ն.:
6. **Աշոտ Սարգսյան,** Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991, էջ 55:

7. Տե՛ս, օրինակ, **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Երևան, էջ 50, 56, 170, 198, 254, 280, 442 և այլն:
8. **Աբրահամ Զամինյան,** Հայ գրականության պատմություն, Ա մաս, Նոր Նախիջևան, 1914, էջ 240: